# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

*0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5*
*Էլ. փոստ info@prosecutor.am*

*"Hetq.am" էլեկտրոնային կայքի լրագրող*
*Տիրայր Մուրադյանին*

*Հարգելի՛ Տ. Մուրադյան*

2018թ. օգոստոսի 3-ին Ձեր կողմից ՀՀ գլխավոր դատախազության էլեկտրոնային փոստին ուղարկված հարցման 1-ից 5-րդ կետերում ներառված հարցերի կապակցությամբ հայտնվում է, որ այդ հարցերում նշված՝ Արշակ Հակոբյանի և Հայկ Ստեփանյանի նկատմամբ որևէ քրեական գործով քրեական հետապնդում հարուցված չէ:

Ինչ վերաբերում է հարցման 6-րդ և 7-րդ կետերում ներառված հարցերին, ապա նշենք, որ քրեական դատավարության մասնակցի կամ քրեական դատավարությանը մասնակցող (ինչպես հարցման մեջ է ձևակերպված՝ քրեական գործով անցնող) անձի հաշվառում ՀՀ դատախազությունում չի իրականացվում:

*Հարգանքով՝*

*ՀՀ դատախազության*
*հանրային կապերի բաժնի պետ՝* *Արևիկ Խաչատրյան*